

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍՀ ԱՌԺ-ՈՂԿՈՐԱՑ

Պրոֆ. Է. ԳՍԲԻԵԼՅԱՆ

Կ Ա Ր Մ Ր Ո Ւ Կ

—

ԼԵՍՂ ՊԵՏԿՐՈՑ 1937 ՅԵՐԵՎԱՆ

31 JAN 2018

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԱՌԺՈՂԿՈՄՍՑ

616.91.

Պրոֆ. Հ. ԳԱՌԻԵԼՅԱՆ

Կ Ա Ր Մ Ր Ո Ւ Կ

—  
ՀԽՍՀ ՊԵՏՂՐԱՏ 1937 ՅԵՐԵՎԱՆ

## ԿԱՐՄՐՈՒԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գիտնական Յոհաննոն (Johannon 1926 թ.) կարմրուկն անվանել է ամենասարսափելի բժավոր հիվանդությունը:

Կարմրուկը սուր վարակիչ հիվանդություն է: Նա ունի ցիկլիկ ընթացք, տարածվում է մեծ կամ փոքր համաճարակներով:

Վորովհետև կարմրուկով հիվանդանում են զբլխավորապես յերեխաները, ուստի և այդ հիվանդությունը մանկական բժավոր հիվանդություն է կոչվում:

Կարմրուկը գատել են մյուս բժավոր հիվանդություններից 18-րդ դարի կեսից: Սակայն նա հայտնի է լեղել հին դարերում:

Յեվրոպայում կարմրուկը հայտնի յե դարձել մեր թվադրության 6-րդ դարից: Սարակինոսներն են այդ հիվանդությունը բերել Ասիայից: Կարմրուկի առաջին նկարագրությունը տվել է արաբ բժիշկ Ռաջեն: Ժամանակի ընթացքում կարմրուկը մուտք է գործել յերկրագնդիս ամենահեռավոր տեղերը, Նաղաղ ովկիանոսի կղզիները:

Կարմրուկն ավելի շատ գոհեր է տանում, քան քուրթնն ու դիֆտերիան միասին վերցրած:

Պետերբուրգում 1888 թվից մինչև 1904 թիվը միջին հաշվով յուրաքանչյուր տարի մահացել են 650



1-37329x

հողի: Վերջին տարիները Հենինգրադը տալիս է ավելի պակաս մահացություն:

Գերմանիայում նախապատերազմական տարիներին մահանում ելին կարմրուկից 40-45,000 չեքեխա:

Վորոշ յերկրներում, ինչպես Անգլիայում, կարմրուկն ըստ մահացության տոկոսի զբավում է առաջին տեղը տուրքերկուլյոզից հետո: Այնտեղ 1917 թվին տուրքերկուլյոզից մահացել են 55,934 մ., կարմրուկից՝ 10,538 մարդ: Ինֆեկցիաների շարքում հետքահետե մահացությունը կարմրուկից և կարմրուկի համաճարակներից ընդունվում է առաջին տեղը:

Մոտավոր հաշվով միայն Յեվրոպայում 1900-1910 թ. թ. մարդկային կորուստը կարմրուկից հաշվվում է մի միլիոնից վոչ պակաս:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1901-1920 թ. թ կարմրուկը ավել է մոտ 100,000 զոհ:

Կարմրուկի նշանակութունը չի սպառվում միայն վերոհիշյալով:

Նա վտանգավոր է և նրանով, վոր խիստ թուլացնում է մանկան որգանիզմը, նրան դարձնում է մատչելի, ախտընկալ ուրիշ հիվանդությունների հանդեպ:

Փաստ է, վոր անգամ թեթև կարմրուկից հետո, յեթե անմիջապես յերեխան հիվանդանում է կապուլտ հազով, դիֆթերիայով, մանավանդ տուրքերկուլյոզով, ապա այդ հիվանդություններն առանձնապես ծանր են ընթանում, առավելապես վտանգավոր են դառնում:

Բացի այդ, կարմրուկն ազդում է մարդկային

կյանքի միջին տևողության վրա, կարճացնում է մարդու կյանքը:

Որինակ՝ Ֆարերյան կղզիներում, այն ժամանակաշրջանում, յերբ այնտեղ կարմրուկ չի յեղել, ամենամեծ մահացությունը չեղել է 80-90 տարեկանների մեջ, մինչդեռ հարևան Դանիայում նույն ժամանակ ամենամեծ մահացությունը յեղել է 60-70 տարեկանների մեջ: Տարբերությունը յերկու վայրերի միջև այն է, վոր Դանիայում կարմրուկն անպակաս է յեղել:

Այնուհետև կարմրուկն ունի և մի այլ բացասական կողմ. այդ այն է, վոր կարմրուկը յերեխային դարձնում է զգալուն՝ հանդեպ տուրքերկուլյոզի: Այդ վտանգն առավելապես մեծ է լինում այն պատճառով, վոր կարմրուկն ախտահարում է փոքրահասակ յերեխաներին: Այդ է պատճառը, վոր կարմրուկն ամեն տարի տուրքերկուլյոզի համար հարյուր հազարավոր մանուկների յե նախապատրաստում:

## ԿԱՐՄՐՈՒԿԸ ՅԵՎ ՀԱՍԱԿԸ

Կարմրուկից հիվանդանում են ամեն հասակի մարդիկ:

Դրան ապացույց կարող են ծառայել հիվանդացումները զորքի շարքերում պատերազմի ժամանակ:

Դրան կարող են ապացույց լինել յերբեմնակի համաճարակները հեռավոր կղզիներում, ուր տասնյակ տարիների ընթացքում հազորդակցության բացակայության պատճառով համաճարակներ չեն լինում: Յեվ յերբ յերկար ընդմիջումից հետո վարակ է մըտնում կղզին, հիվանդանում են և մանուկները և հա-

սակավորները, վերջիններիս թվում և ծերերը:

Այսպես և յեղել, որինակ՝ հիշյալ Ֆարերյան կղզիներում:

Բայց և այնպես կարմրուկի նկատմամբ ամենից ավելի զգալուն և մանկական հասակը:

Մանկական հասակում ամենազգալուն շրջանը 6 ամսից մինչև 5-6 տարին և: Ամենամեծ մահացությունն ընկնում և 6 ամսից մինչև 2 տարեկան հասակին:

Փարիզի վիճակագրության տվյալների համաձայն, միջին մահացությունն ըստ հասակի 1904-1913 թ. թ. յուրաքանչյուր 10,000՝ մարդու նկատմամբ ունեցել և հետևյալ պատկերը:

0 ամսականից—	3 ամսական—	5,26	
3 «	6 «	22,03	
6 «	12 «	78,98	
1 տարեկանից	2 տարեկան	75,75	
2 «	3 «	37,61	
3 «	4 «	12,67	
4 «	5 «	7,07	

Փարիզում (L' hôpital Claud Bernard) 1922-1923 թ. թ. մահացությունը կարմրուկից մինչև 1 տարեկան հասակը կազմել և հիվանդացողների 43, 3 տոկոսը:

1 տարեկանից	մինչև	2 տար.	36,16 տոկոս,
2 տարեկանից	մինչև	3 տար.	17,11 տոկոս,
3 «	«	4 «	5,6 տոկոս,
4 «	«	5 «	0 տոկոս:

Ըստ գերմանական հեղինակ Պֆաունդլերի (Pfaundler) Գերմանիայում մեծագույն մահացությունը

կարմրուկից չեղել և մինչև 6 տարեկան հասակը, այն և՛ 86,5 տոկոս, 6-14 տար.՝ 13,5 տոկոս:

Ըստ Հենոխի (Henoch) մահացությունը մինչև 2 տարեկան հասակը կազմել և 55 տոկոս:

Ըստ Հոլիդեյի (Holiday) Անգլիայում մինչև 2 տարեկան հասակը մահացությունը տասն անգամ ավելի մեծ և յեղել, քան ավելի բարձր հասակ ունեցողների մեջ:

Ըստ Պրինցինգի (Prinzing) մանկան յերկրորդ տարին տալիս և ամենամեծ մահացությունը:

Իհնչն և պատճառը, վոր մինչև 6 ամսական հասակը յերեխաներն անախտընկալ են լինում:

Նախ՝ այդ անախտընկալությունը հարաբերական և. հայտնի չեն դեպքեր, յերբ կարմրուկով հիվանդացել են անգամ ութ որական յերեխաները: Նորածինները կարող են ծնվել կարմրուկով. դա այն դեպքում և լինում, յերբ պտուղը վարակվում և ներարդանդալին կյանքում իր մորից: Մինչև 3-6 ամսական հասակ ունեցող յերեխաների անախտընկալությունը պիտի համարել մորից ստացած և ստացվող իմունիտետով, վորը սակայն հետզհետե չքանում և վոմանց մեջ շուտ, մյուսների մեջ քիչ ուշ:

Այսպես ուրեմն հասակի ազդեցությունը թե հիվանդացման և թե, վոր ավելի կարևոր և, մահացության վրա հսկայական և:

Այդ համաճարակագիտական փաստն ուսուցանում և մեզ առանձին հոգ տանել յերեխաներին նրանց ամենավտանգավոր տարիքում և ըստ կարելույն կանխարգելել հիվանդությունը:

**ԱՆՅԿԱՅՐԱԾ ԿԱՄ ՌԻՂԵԿԻՑ ՀԻՎԱՆԳՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԻԵՑՈՒԹՅՈՒՆԸ**

Կարմրուկով հիվանդները հեշտությամբ են յեն-  
թարկվում բարդություններին: Այս հանգամանքն  
առանձնապես նշելի յե, վորովհետև բարդությունները  
զալիս են լրջացնելու հիվանդի կացությունը:

Խիստ կարևոր է այն առողջական կացությունը,  
վորի ժամանակ վրա յե հասնում կարմրուկը:

Յեթե հիվանդը դեռ չի կազդուրվել նախընթաց  
հիվանդությունից, այդ դեպքում կարմրուկը նրա  
համար ավելի ծանր է լինում:

Ի բնե թուլերը, ախտիտիկները, ժառանգական  
սիֆիլիս ունեցողները, գրիպից նոր ապաքինվածնե-  
րը միշտ տալիս են բարձր մահացություն: Այդ շար-  
քին են պատկանում նաև մարսողական ուղիների  
խանգարումներ ունեցողները, մանավանդ արհեստա-  
կանորեն սնվողները, տուբերկուլյոզով տառապողնե-  
րը և վերջապես նրանք, ովքեր կարմրուկի ժամա-  
նակ դիֆթերիա են ստանում:

Վերոհիշյալ ֆակտորների ազդեցության մասին  
վկայում են Դեգկվիցի (Degkwity) տվյալները. Համ-  
բուրգի մի մանկատանը կային 66 ախտիտիկ, սիֆի-  
լիտիկ և տուբերկուլյոզով հիվանդներ—5 ամսից  
մինչև 2 տարեկան: Դրանց ընդհանուր մահացությու-  
նը կարմրուկից յեղել է 37 տոկոս. մի տարեկանից  
փոքր մանուկների մեջ՝ 54 տոկոս: 7 տուբերկուլյոզ  
ունեցողից մահացել են 5-ը: 14 կարմրուկով հիվանդ-

ները միաժամանակ հիվանդացել են և դիֆտերիա-  
յով, նրանցից 13-ը մահացել են:

Այստեղ առանձին հիշատակության արժանի յե մի  
շատ կարևոր հանգամանք. վոչ ախտիվ տուբերկու-  
լյոզը մանկան կարմրուկի պրոցեսի ազդեցության  
ներքո կարող է դառնալ ախտիվ:

**ԿԼԻՄԱՆ ՅԵՎ ԿԱՐՄՐՈՒԿԸ**

Կարմրուկի համաճարակը պոթվում է և՛ հարավի  
և՛ հյուսիսի ժողովուրդների մեջ, բոլոր կլիմայական  
գոտիներում:

Սակայն մեծ կապ կա մի կողմից տարվա յեղա-  
նակի, մյուս կողմից համաճարակի թուլյ կամ սաս-  
տիկ թափի միջև: Ցուրտ սեզոններին ավելի շատ  
հիվանդացումներ են տեղի ունենում:

Ըստ Հիրշի (Hirsch) վիճակագրության, վորը հիմ-  
նված է 530 համաճարակի վրա, 339 համաճարակ ընկ-  
նում է ձմռան ու գարնան ամիսներին և միայն 191-ը՝  
տարվա տաք ամիսներին:

Ըստ նույն հեղինակի՝ 213 համաճարակներն, ըստ  
տարվա յեղանակների, հետևյալ պատկերն են ներկա-  
յացրել.

59	— —	ձմրանը
76	— —	գարնանը
30	— —	ամրանը
48	— —	աշնանը:

**ՍՈՑԻԱԼ—ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՌԻ  
ԿԱՐՄՐՈՒԿԸ**

Բնակարանային աննպաստ պայմանները (նեղ-  
վածք և այլն), վատ ոդափոխությունը, լույսի ա-

Ղոտուկները, վատթար սանիտարական պայմանները, կեղտը, անբավարար սնունդը, ցրտից վատ պաշտպանվող շենքերը, անբավարար հագուստը—այս ամենը հանդիսանում են կարմրուկի լավագույն դաշնակիցները:

Այդ և պատճառը, վոր կարմրուկից քաղաքն ավելի մեծ մահացու թյուն է տալիս, քան գյուղը:

Ամերիկյան տվյալները հաստատում են այդ պերճախոս կերպով: Նույնը հաստատում են և ֆրանսիական տվյալները:

Ըստ Գեբրեյի Փարիզում մահացու թյունը 3 անգամ ավելի յե մեծ, քան բնակչության այնպիսի վայրերում, ուր մարդկանց թիվը 5000-ից ավելի չէ:

Այդ հեղինակի տվյալներով՝ ինչքան ավելի մեծ է բնակիչների թիվը, այնքան ավելի բարձր է մահացու թյան տոկոսը:

Որինակ՝ 1906—1913 թվերին Փարիզում կարմրուկից մահացել է 235 հոգի (1,000,000 բնակչությունից), իսկ այն քաղաքներում, ուր բնակչության թիվը 30,000-ից ավելի չէ—164 հոգի, այն քաղաքներում, ուր բնակչությունը 5000-ից 30,000 է, մահացողների թիվը կազմել է 104 մարդ, իսկ գյուղերում, ուր բնակչության թիվը 5000-ից պակաս է՝ 66 մարդ:

Նույն որինաչափությունն ստացվում է և տարեկան մահացու թյան գործակցի նկատմամբ:

Մահացության գործակիցը

Քաղաքներ 30,000		
բնակչությամբ	0—1	—31,4
	1—19	— 6,5

Բոլոր հասակները 21,5		
Բնակչության թիվը 0—1	—	176,1
5000-30,000		
	1—19	—27
Բոլոր հասակներից 11,9		
Բնակչության թիվը 0—1	—	150,7
5000-ից պակաս		
	1—19	— 13,8
Բոլոր հասակներից 7,7		

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՅԵՎ ԿԱՐՄՐՈՒԿԸ

Բերտիցոնն ուսումնասիրել է այդ հարցը Բերլինի, Վիեննայի և Փարիզի բնակչության վերաբերմամբ ('86-1807 թ. թ.) և ստացել այնպիսի արդյունքներ, վորոնք հաստատում են նյութական պայմանների ազդեցությունը կարմրուկից առաջացող մահացու թյան վրա:

Բերտիցոնն ստացել է տարեկան միջին մահացության հետևյալ թվերը՝ յուրաքանչյուր 100,000 բնակչության նկատմամբ:

	Խիստ ջքավոր	Ունեվոր	Հարուստ	Շատ հարուստ	
Փարիզ—	66,7	55,5	37,1	23,9	9,2
Բերլին—	32,0	27,1	24,4	14,9	6,9
Վիեննա—	112,0	73,9	85,8	63,9	2,7

Դերեն վորոշակի հաստատել է, վոր ունեվորների թաղամասերում, ուր անհամեմատ ավելի քիչ մարդիկ ունեն վատ բնակարան, մահացությունը թե տանը և թե հիվանդանոցում զգալիորեն պակաս է, քան ջքավորների մեջ:

**ՆԵՂՎԱԾՔԸ ՄԱՆԿԱՏՆԵՐՈՒՄ ՈՒ ՀԻՎԱՆԴԱ-  
ՆՈՑՆԵՐՈՒՄ ՆՈՒՑՆՊԵՍ ԱՆԴՐԱԴԱՌՆՈՒՄ Ե  
ԿԱՐՄՐՈՒԿԻ ՄԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՎՐԱ.**

Ըստ Դեզկվիցի՝ մինչ Գերմանիայում ընդհանուր մահացու թյուրունը կարմրուկից 6-7 տոկոս է, մսուր-ներում և մանկատներում հասել է 27 տոկոսի, իսկ հիվանդանոցներում, մի քանի համաճարակների ժամանակ հասել է 50 տոկոսի:

Փարիզում 1880-86թ. թ. հիվանդանոցներում մահացու թյուրունը հասել է 46 տոկոսի:

Մարսբուրգի կլինիկայում 1911 թվին մահացու թյուրունը յեղել է 58 տոկոս, Համբուրգի վորբանոցում ծծկերների մահացու թյուրունը կազմել է 50 տոկոս, յերկու տարեկաններինը՝ 33 տոկոս:

Այդ անուելի մահացու թյուրունը հիվանդանոցներում, բացի բնակարանի նեղվածքը բացատրվում է և մի ուրիշ հանգամանքով, այն է՝ խառը վարակումներով, վորոնք անպայմանորեն առաջանում են հիվանդների համար մեկուսարաններ չլինելու հետևանքով:

Փարիզի հիվանդանոցների այդ անագին մահացու թյուրունը պակասել է միայն այն ժամանակից, յերբ բացել են մեկուսարաններ, բոքսեր:

Ռուսաստանի հիվանդանոցներում ևս շնորհիվ խտու թյան, վատ սանիտարական պայմանների, մահացու թյուրունը նույնպես յեղել է բարձր: 1896 թ. Պետերբուրգի Բոտկինյան հիվանդանոցում նա յեղել է 15,5 տոկոս, Ուդենբուրգի հիվանդանոցում՝ 18 տոկոս, Մոսկվայի Ռուսակովյան հիվանդանոցում՝ 27 տոկոս:

Ուրեմն մի շարք սոցիալ—հիգիենիկ պայմանների ազդեցությունը կարմրուկի վրա անվիճելի է:

Պրինցիպի լիարժեք վիճակագրական աղյուսակը, վոր ընդգրկում է կարմրուկի մահացու թյան գինամիկան յեվրոպական յերկրներում, 50 տարուց ավելի մի ժամանակաշրջանի նկատմամբ, ցույց է տալիս, վոր այն դաժան մահացու թյուրունը. վոր յեղել է 50 տարի առաջ, հետգհետ նվազում է: Այդ տեսակետից մենք ամեն հիմք ունենք սպասելու, վոր մեր Միության սահմաններում, ուր աննախընթաց սոցիալական տեղաշարժ է կատարվում, ուր աշխատավոր մասսաների բարեկեցությունն արագորեն աճում է, մահացու թյուրունը կարմրուկից նվազագույն, մինիմալ չափերի հասնի:

**ԱՆՏՐԵԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՄՐՈՒԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ**

Մարդկային ցեղը խիստ ախտընկալ է կարմրուկի նկատմամբ: Կարմրուկով վարակվելու ընդունակ մարդիկ կազմում են բնակչության խոշորագույն մասը՝ 98-99,6 տոկոսը:

Նրան յենթակա յեն բոլոր հասակները՝ և փոքրերը և մեծերը, ինչպես վերը հիշել ենք: Սովորաբար նորմալ պայմաններում, նորմալ միջավայրում մեծերը չեն հիվանդանում, վորովհետև նրանք, նախքան մեծանալը, բազմիցս յենթարկվել են վերուսին ու հիվանդացել:

Հետամնաց և հեռավոր վայրերում, ուր յերթևեկություն չկա, յերբ վարակ է առաջանում, փոքրերի հետ, միաժամանակ հիվանդանում են և մեծերը: Այդպես է յեղել 1846 թվին:

Ֆարերյան կղզիներում 60 տարվա ընթացքում կարմրուկ չի յեղել. բայց բնակչության 90 տոկոսը հիվանդացել է, հենց վոր վարակ է յերեվացել:

Նորմալ պայմաններում յերեխաներն են դերազանցորեն ախտահարվում:

Մինչև 6 ամսական հասակը հիվանդացման դեպքեր քիչ են լինում:

Շատերի կարծիքով մինչև 2 ամսական ծծկերները բացարձակ իմունիտետ ունեն. այդ իմունիտետը նրանք ստանում են մորից՝ նրա արյան միջոցով. իմունիտետը պահպանվում է վորոշ ժամանակ, վորից հետո հետզհետե վերանում է:

## ՎԱՐԱԿՎԵԼՈՒ ՁԵՎԸ

Կարմրուկն անցնում է հիվանդից առողջին համարյա բացառապես մանր մասնիկների միջոցով, վորոնք ցնդուն են, արագաշարժ և ողի հոսանքով ցրվում են: Շատ հեղինակներ հաստատում են, վոր կարմրուկի վիրուսը մի հարկից մյուս հարկը կարող է անցնել ողափոխության (վինտիլացիայի) անցքերով. վիրուսը կարող է և հեռու տարածվել, յեթե ոգը շարժուն է:

Իրերի կամ յերրորդ անձնավորության միջոցով վարակի փոխանցում ընդհարապես չի լինում: Յեթե անգամ լինում են այդպիսի դեպքեր, ապա զբանք էլ ծայրահեղորեն բացառիկ են:

Կարմրուկը կարող է հղի կնոջից անցնել յերեխային արգանդի միջոցով, յեթե մայրը ծննդից առաջ կարմրուկով հիվանդանում է:

Հաստատապես վորոշ է, վոր կարմրուկը վարակիչ

է հենց սկզբից, նախանիշների շրջանից սկսած: Նրամանապես անվիճելի յե համարվում այն, վոր կարմրուկը դադարում է վարակիչ լինել ցանից 6 որ հետո:

## ԿԱՐՄՐՈՒԿԻ ԿԼԻՆԻԿԱՆ

Նորմալ կերպով ընթացող, ախտիկ կարմրուկն ունի զարգացման չորս շրջան.

1) Ինկուբացիոն,

2) Նախանիշների շրջան,

3) Ցանի շրջան,

4) Ապաքինման կամ թեփոսման, կամ թեպիզմենտացիոն շրջան:

Ինկուբացիոն շրջանն առհասարակ լինում է կայուն և ունի վորոշ տևողություն. ինկուբացիոն շրջանն սկսվում է վարակման մոմենտից և վերջանում է հիվանդության առաջին սիմպտոմները յերևան գալով: Ամենից հաճախ, դեպքերի ճնշող մեծամասնության դեպքում այդ տևողությունը հավասար է 13 որվա: Լինում են նաև վարիանտներ՝ 12—14 որ բացառիկ դեպքերում ինկուբացիոն շրջանը կարող է յերկարաձգվել մինչև 24—28 որ:

Հիվանդության այդ շրջանն արտաքուստ չի արտահայտվում, թեև նա ևս ողգանիզմի և կարմրուկի վիրուսի (վարակի) միջև տեղի ունեցող փոխազդեցության մի աղտիվ փուլ է հանդիսանում: Այդ ներքին աղտիվությունը արտահայտվում է, որինակ, հետեվյալ յերևույթներով. հիվանդի արյան մակարդումը դանդաղում է. արյան սպիտակ գնդիկները—լեյկոցիտները մի շարք փոփոխությունների յեն յենթարկ-

վում. յերեխայի քաշը փոխվում ե:

Նախանիշները շրջանը (պրոդրոմալ) հաջորդում ե ինկուբացիոն շրջանին. յերբեմնի աշխույժ, առողջ յերեխան փոխվում, թուլանում ե, գանգատվում ե գլխացավից. նրա տաքությունը արագ բարձրանում ե մինչև 39-39,5: Սկսվում ե հարբուխ, փուշտոց, չոր հաղ, քթից առատորեն պարզ հեղուկ և արտաթորվում: Առավոտյան տաքությունը բավականաչափ իջնում ե, յերբեմն հասնում ե նորմալին, սակայն կատառալ յերեվոլյութները շատանում են: Յերկրորդ որվա վերջում աչքի յե բնկնում աչքերի բորբոքում:

Աչքից արցունք կամ թարախախառն արտաթորանք ե հոսում. սկսվում ե նաև լուսավախություն: Յերբորդ որը տաքությունը նորից բարձրանում ե, կատառալ նշաններն ել ավելի յեն ուժեղանում. չոր, հաճախակի հազը յերբեմն հանգիստ չի տալիս մանկան, նրա ձայնը կորցնում ե իր բնական հատկությունը, դառնում ե խզված, խուլոտ, վորն արտահայտություն ե ձայնալարերի ախտահարման: Յերբեմն շնչառությունը դառնում ե աղմկոտ, յեթե յերեխան նեվրոպատիկ ե, այդ դեպքում կարմրուկին հատուկ սովորական լ ա Ր ի ն գ ի տ ը կարող ե փոխվել ծանր ձևի. կարող ե առաջ գալ, այսպես կոչված, կեղծ կրուպ, վորի ժամանակ մերթ ընդմերթ յերեխան շնչահեղձվում ե:

Այդ ժամանակ բերնի լորձաթաղանթի վրա յերևան են գալիս յերկու ախտանիշ (սիմպտոմ), վորոնք յուրահատուկ են և բնորոշ կարմրուկի համար:

Մեկն այդ ախտանիշներից կրում ե այն յերկու հեղինակների անունները, վորոնք միաժամանակ նը-

կատել են այդ ախտանիշը և նկարագրել այն: Այդ ախտանիշը կոչվում ե Կոպլիկ—Ֆիլատովի ախտանիշ:

Դրանք՝ մանր, սպիտակավուն, քիչ կապտավուն կետեր են՝ կարմիր պսակով ողակված և առաջանում են այտերի լորձաթաղանթի, շրթունքների, լնդերի վրա, մնում են 4-6 որ և ապա չքանում: Այդ կետերը նման են թեփի: Դրանք արտահայտություն են լորձաթաղանթի վրա առաջացած ցանի, վորի հետևանքով լորձաթաղանթը ճարպային կազմափոխման ե յենթարկվում և թեփոտվում ե:

Ֆիլատով—Կոպլիկի բծեր առաջանալու հետ միաժամանակ կամ քիչ հետո արտաքին մակերեսներին առաջացող ցանից առաջ, կարծր կամ փափուկ քիմքի վրա, կամարների, նշագեղձերի և ըմպանի յետևի պատի վրա յերեվան են գալիս խոշոր, անկանոն ձևի կարմիր բծեր, վորոնք ենանթեմա (ներքին ցան, ներցան) են կոչվում:

Բուլբոլի ժամանակ ևս կարող ե ենանթեմաներցան լինել: Միայն այս դեպքում նա ուրիշ տեսք ե ունենում և նման ե մանրազուլյն կանոնավոր տպագիր կետերի, վորոնք դասավորված են լինում փափուկ քիմքի միայն կենտրոնում:

Կարմրուկային ենանթեմայի շրջանում կարող ե քթից յերկարատև և սաստիկ արյունահոսություն առաջանալ: Յերբեմն արյունահոսությունը վաղաժամ ե սկսվում, այն ե՝ պրոդրոմի շրջանում, լինում ե յերկարատև (մի քանի որ) և առատ արյան մեծ կորուստը կարող ե վտանգավոր սակավարյունություն (անեմիա) առաջացնել:

1-373294



Ի վերջո պրոդրոմալ շրջանում յերբեմն կարող և լուծ պատահել. դա ավելի հաճախ նկատվում է փոքրահասակ յերեխաների, առանձնապես արհեստակա- նորեն սնվողների մեջ:

Այդ լուծը հետեանք է կարմրուկի վարակից ա- ուջացող թուլյների ազդեցութեան, թուլյներ, վորոնք քնասում են մարսողական ուղիների լորձաթաղանթը:

Ցանի առաջացման շրջանն սկսվում է չորրորդ ո- րը: Յերեվան են գալիս բաց գուլնի բծեր, պապուլա- ներ, վորոնք նախ և առաջ յերեկում են ականջների յետեկում, մազերի տակ, այտերի վրա, քունքերին, քթի ու մեջքի վրա:

Այդ ժամանակ մնացած բոլոր ախտանիշները զար- գանում են. չոր հազը դառնում է ավելի հաճախակի, տանջող. աչքերի կոպերն աչրվում են, կպչում են ի- րար՝ թանձր թարախային հեղուկով. լեզուն փառա- կալում է. նշագեղձերը, ըմպանի յետեկի պատն ալ կարմիր են դառնում. տաքությունը 40 և ավելի է. ախորժակ չի լինում, հիվանդը սաստիկ ծարավ է զգում, շրթունքները չորանում են և յերբեմն ճաք- ճքում:

Ցանը զարգանում է վորոշ հետեկողականութեամբ. առաջին օրն առատ ցան է նկատվում դեմքին, գըլ- խավորապես դեմքի կենտրոնում, քթի, շրթունքների, կզակի վրա, աչքինքն այն տեղերում, վորոնք խը- նայված են լինում քութեղի ժամանակ. յերեսի այդ մասը քութեղի ժամանակ գունատ է լինում և կոչ- վում է քութեղային յեռանկյունի:

Յերկրորդ օրը թանձր ցանը ծածկում է ամբողջ իրանը և մասամբ ստորին ծայրանդամները: 40-40,5

ն. հիվանդի դեմքը խիստ բնորոշ է՝ կարմիր յերես, փքված և ալուված կոպեր, լաչն քիթ, հաստ շրթունք- ներ:

Յերրորդ օրը ցանը դալկանում է դեմքին, փարթամ է լինում իրանի վրա և առատ՝ ծայրանդամների վրա: Այսպիսով ցանի ամբողջ շրջանը ընդհանրապես տեկում է 3 օր:

Յերրորդ օրվա վերջին ցանը հասնում է առավե- լագույն զարգացման և ապա սկսում է թողնել ցանի թողնումի հետ գուգընթաց սկսում են նվազել նաև մյուս ախտանիշները:

Չորրորդ շրջանը ամօքման, թեփոտման, պիգմեն- տացիայի շրջանն է: Յեթե կարմրուկը բարընթաց է, յեթե չկան բարդություններ, ցանի դուբս գալուց յերեք օր անց տաքությունն իջնում է, կատառալ յերեկութեները, կոպերի կատառը, հարբուխը, ըմպա- նի կարմրությունը, հազն սկսում են մեղմանալ: Հի- վանդն սկսում է թարմանալ, աշխուժանալ, ախոր- ժակը բացվում է, հիվանդն սկսում է հետաքրքրվել իր շրջապատով, մաշկն սկսում է թեփոտել (մանրիկ թեփով):

## ԿԱՐՄՐՈՒԿԻ ԸՆԹԱՑՔԸ

Կարմրուկի ցանն ունի բժավօր, պապուլեոզ բը- նուլթ. կարմրուկային բիծը յուրատեսակ զարգացում է ունենում. բիծն սկզբից մանր է լինում, ասեղի գնդի չափ. ապա նա արագորեն մեծանում է, հաս- նում է վոսպի մեծութեան. ծայրերն անհավասար ու կտրտված են լինում. բժի մակերեսն սկզբում հարթ է լինում հետո նրա կենտրոնը բարձրանում է, բիծը

դառնում ե պապուլա. բիծն առաջ վարդագուլնն ե լինում, հետո դառնում ե կարմիր, ինքը, բիծը քիչ բարձրանում ե նորմալ մաշկի մակերեսից, այդ բարձրացումը հեշտ ե նկատել նաև շոշափելի:

Յերբեմն պապուլաները շատ պարզորոշ արտահայտված են լինում. առատ քրտնաթորության ժամանակ պապուլաների կենտրոնում լցրելան են գալիս փամփուռտիկներ թափանցիկ պարունակով թյամբ, այդպիսի ցանը կոչվում ե կորեկանման ցան: Յեթե բծերը խիտ են դասավորված, ապա նրանք միաձուլվում են, և այդպիսի կարմրուկը կոչվում ե միաձուլվ կարմրուկ:

Յերբեմն արյունազեղում ե առաջանում: Ցանն ստանում ե կապտակարմրագուլն տեսք: Սեղմելուց արյունազեղումը չի չքանում, այդպիսի ցանը կոչվում ե պետեխիալ ցան:

Հեմոռագիկ կարմրուկը տարբերվում ե պետեխիալից նրանով, վոր առաջինի ժամանակ արյունազեղում լինում ե մոշ միայն բծերում, այլև նրանցից դուրս, մաշկի վրա: Բացի այդ, հեմորագիկ կարմրուկի ժամանակ արյունազեղումներ կարող են առաջանալ նաև լորձաթաղանթներից: Վերջին տեսակի կարմրուկը ծանրագույնն ե և համարվում ե մահացու:

Ցանը՝ հասնելով իր գարգւցման գագաթնակետին, մնում ե աչդ դրության մեջ սովորաբար մի ուր կամ ավելի և ապա սկսում ե թոշնել: Թոշնումը տեղի յե ունենում նույն հետեողականությամբ, ինչ կարգով ցանը դուրս ե տվել—առաջ դեմքին, հետո՝ իրանի վմա և ապա ծայրանդամների վրա: Վառ կարմիր բը-

ձերը դառնում են բաց դեղնագուլն: Այդ ժամանակ ցանը սեղմելուց չի անհետանում. առաջանում ե պիզմենտացիա, վորը մնում ե նկատելի մի շաբաթից մինչև լերկու շաբաթ:

Այդ պիզմենտացիան այնպիսի մի բնորոշ ախտանիշ ե կարմրուկի համար, վոր նրա հիման վրա ճըշտիվ կարելի յե կարմրուկի հետագարձ դիագնոզ դընել:

Թոշնումի հետ միաժամանակ կամ քիչ հետո թեփոտում ե սկսվում. թեփոտումն այնքան ավելի առատ և սաստիկ ե լինում, վորքան ավելի խիտ ե լցրել ցանը. այդ յերեկույթն առանձնապես խիտ ե արտահայտվում դեմքի վրա:

Կարմրուկի թեփոտման ժամանակ վերնամաշկը յերբեք չի իջնում լաթերով, ինչպես այդ լինում ե քուրթեշի ժամանակ, այլ մանր-մանր պատռիկներով:

## ՏՄ.ՔՈՒԹՅՈՒՆ

Սովորական, միջին ծանրության կարմրուկի ժամանակ տաքության կորագիծը տիպիկ ե լինում: Այդ տիպիկությունն արտահայտվում ե նրանով, վոր նա ունի յերկու վերելք. առաջինը պրոդրոմալ շրջանում, յերկրորդը ցանոտման շրջանում: Այդ յերկու վերելքի միջև լինում ե կարճ, յերկու-չերեքուրջ փոքր տաքության շրջան:

Յերկրորդ վերելքը լինում ե ավելի բարձր՝ 40° և ավելի. այդպիսի բարձր տաքությունը մնում ե 3 որ, իսկ հետո, լերը ցանը կատարում ե իր ամբողջ գարգացումը, ապա նա միանգամից կամ աստիճանաբար իջնում ե:

Յեթե ցանի չորրորդ որը տաքությունը չի իջնում, նշանակում է, վոր սկսվել է կամ արդեն գոյություն ունի ինչ վոր բարդություն՝ թոքերի կամ ականջների բորբոքում:

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԸ

Ցանի զարգացման ժամանակ հիվանդը գանգատվում է գլխացավից, յերբեմն ընկնում է կիսամոռաց դրության մեջ, զառանցում է, կոպերի բորբոքումն ընդունում է լորձաթարախային բնույթ. կոպերն ուռչում, կպչում են իրար, այդ պատճառով հիվանդն առավոտյան դժվարությամբ է բացում աչքերը. քթի լորձաթաղանթը նույնպես այտում է. հարբուխը սաստկանում է. լորձաթարախային հեղուկը թրջում է վերին շուրթը, ճեղքվածքներ է առաջանում, վորոնք արյունազեղում են առաջացնում, յերբ հիվանդը բերանը բաց է անում: Ցավից հիվանդը խուսափում է բերանը բաց անել, հրաժարվում է սննդից, լեզուն փառակալում է, բերանից վատ հոտ է գալիս, փափուկ քիմքը, ըմպանը կասկարմիր են, լնդերքը ծածկված է լինում ճերմակավուն փառով:

Փսխում քիչ է նկատվում. կարմրուկի հենց ըսկզբում հաճախ կարող է լուծ լինել. լուծ լինում է և փոքրահասակ և մեծահասակ յերեխաների մեջ: Մինչև 5 տարեկան հասակը, լուծը առանձնապես հաճախակի յե լինում: Սովորաբար այդ լուծը ցանի շրջանի վերջը սկսում է մեղմանալ և դադարել: Փոքրահասակ յերեխաների մոտ լուծը կարող է դառնալ յերկարատև և փոխվել լուծը բարդության:

Այդպիսի լուծ կարելի յե հաճախ հանդիպել այն յերեխաների մոտ, վորոնք առաջ տառապել են լուծով:

Թոքերում բացի սուլիչ, խոշոր բշտիկային խըզղոցներից, այլ նշաններ չեն նկատվում:

Կարմրուկի վիրուսը քիչ է ազդում սրտանոթային ապարատի վրա: Յերբեմն նա առաջ է բերում պուլսի դանդաղում, պրոգրոմալ շրջանում արյան ճնշման անկում: Արյունը վորոշ փոփոխություններ է կրում: Մեզի քանակը պակասում է. նրա տեսակարար կշիռը աճում է: Կարող է թեթեւ ալբումինուրիա առաջանալ, իսկ ցանի սկզբին դիագորեակցիա յե նկատվում:

Ներվային սխտեմում արտահայտված են լինում ընդհանուր ինտոկսիկացիայի նշաններ:

### ՊՍԹՈԳԵՆԵՉԸ

Անվիճելի յե, վոր կարմրուկի վիրուսը մուտք է դործում որդանիզմ բերանի և շնչական ուղիների լորձաթաղանթի միջով և ապա անցնում է արյան մեջ, ուր և մնում է պրոգրոմի և ցանոտման շրջանում: Վիրուսն ունի ընտրական մղումն դեպի մաշկը՝ շնչական և մարսողական ուղիների լորձաթաղանթը: Այդ տեսակետից կարմրուկի վարակը տարբերվում է քութեչի վարակից. վերջինս առանձին մղում ունի դեպի սրտանոթային սխտեմը և սերող թաղանթները:

Կարմրուկի վիրուսը փոփոխում է որդանիզմի նորմալ զգայնությունը, զանազան անտիգենների նկատմամբ պակասեցնում է այդ զգայնությունը և

աներգիա եւ առաջ բերում: Այդ մի կողմից. այնուհետեւ այն որդանները, դեպի վորոնց կարմրուկի վարակը մղում ունի, այսինքն՝ թոքերը, աղիքները, մաշկը, դառնում են ախտընկալ հանդեպ յերկրորդային ինֆեկցիաների:

Պիրքեն առաջինն եր, վոր առաջագրել ե կարմրուկի պըոցեսը բացատրելու անաֆիլաքտիկ թորիայով: Մի շարք յերեվույթներ, նրա կարծիքով, կարմրուկի ժամանակ անաֆիլակսիայի կատարյալ համանմանություն են ներկայացնում (որ. լեյկոպոնիա, լիմֆոցիտոզ):

Բացի դրանից, կլինիկ չերեվույթները, քրոնաթորությունը, թքահոսությունը, ցանը նման են այն սինդրոմին, վորը շիճուկային հիվանդություն ե կոչվում:

Ըստ Պիրքեյի ինկուբացիոն շրջանում վիրուսը հարկադրում ե որդանիզմին հակամարմիններ մշակել: Իրանք տեղավորվում են նախ և առաջ մաշկի և լորձաթաղանթների այն մասերում, վորոնք լավ վոռոզվում են զարկերակային արյունով: Այն մազանոթները, ուր առկա չեն հակամարմինները, վիրուսը ազլիտինացիայի ե չենթարկվում և կանգ ե առնում: Վիրուսի և հակամարմինների միացումը ցան ե առաջ բերում: Վորքան այդ պըոցեսն ավելի մոտ ե սրտին, այնքան նա ավելի արագ ե կատարվում:

Կարմրուկի ժամանակ տեղի ունեցող եներգիան Պիրքեն բացատրում ե հակամարմինների և անտիգենների փոխհարարբերությամբ:

Տուբերկուլինի ուակցիան վոչ այլ ինչ ե, չեթե վոչ փոխազդեցություն՝ տուբերկուլինի և առտնձին

հակամարմինների միջև, վորոնք միաձուլված են բջիջների հետ (երգիներ): Կարմրուկի ժամանակ երգիները կլանվում են, շարքից դուրս են գալիս. այսպիսով ուրեմն կարմրուկի վիրուսը մեծապես լանգարում ե որդանիզմի զանազան հակամարմիններ մշակելու ունակությանը:

## ԻՄՈՒՆԻՏԵՏ ՀԱՆԴԵՊ ԿԱՐՄՐՈՒԿԻ

Վերը հիշել ենք, վոր մարդու ախտընկալությունը կարմրուկի հանդեպ խիստ մեծ ե: Ըստ Դոտշտեյնի, այդ իմունիտետն արտահայտվում ե շուրջ 95 տոկոսի սահմաններում: Այդ տեսակետից նրա հետ կարող են մըցել գրիպը և տուբերկուլյոզը:

Ըստ հասակի իմունիտետն աճում ե, վորովհետեւ մարդու մեջ նա մշակվում ե ախտահարման միջոցին:

Մինչև 6 ամսական հասակ ունեցողների իմունիտետն այլ ծագում ունի: Նա մասամբ պայմանավորվում ե կարմրուկով հիվանդացած մոր արյունով, վորն անցել ե մորից մանկան. մասամբ մոր իմունիտետն անցնում ե կաթի միջոցով և ապա այն պատճառով, վոր յերեխան անկարող ե, վորոշ ֆերմենտների բացակայության պատճառով, յուրացնել ինֆեկցիան: Վերջապես կա և իմունիտետ բնական:

Ի բնե անախտընկալների թիվը, ըստ Եվանսի, հասնում ե 4 տոկոսի, ըստ Յիրմանի 2-3 տոկոսի, ըստ ամերիկացի հեղինակների՝ նրանց թիվը անգամ կարող ե հասնել մինչև 11 տոկոսի:

Դերեն ու Յիրմանն ապացուցում են, վոր 3-5 ամսական մանուկները թեև անախտընկալ են, սակայն

յերբ պատահում են թարմ կարմրուկի՝ իմունիտետ են ձեռք բերում, աննկատելի անցկացնելով կարմրուկի ինֆեկցիան:

Հիշյալ հեղինակները մինչև 3 ամսական հասակ ունեցող յերեխաներին համարում են անախտընկալ, անընդունակ անգամ արորտիվ ձեվերով հիվանդանալու: 3-ից 5 ամսական հասակը համարում են համեմատորեն իմուն:

Սակայն հայտնի են հիվանդացումներ և մինչև 3 ամսական հասակը: Պատահում է նաև, վոր կարմրուկով հիվանդացածները, տարիներ անցնելուց հետո, կրկին հիվանդանում են կարմրուկով: Վորովհետև կարմրուկի իմունիտետը խիստ կայուն է, ուստի և կրկնական հիվանդացումներին միշտ պետք է վերաբերվել առանձնապես կրիտիկորեն, վորովհետև նման դեպքերում հաճախ կարմրուկը շփոթում են կարմրախտի հետ: Բայց և աջնպես պետք է իմանալ, վոր իրապես լինում են կրկնական հիվանդացման սակավաթիվ դեպքեր:

Ըստ Պիրբեյի՝ կարմրուկի ժամանակ ինֆեկցիան որդանիզմի մեջ մուտք գործելուց 8-10 օր անց՝ առաջացնում են լիզիններ, վորոնք լուծվում են ինֆեկտը, անտիգենը: Այդ լուծման հետևանքն են լորձաթաղանթների և մաշկի ախտահարումները: Իսկ այդպիսի փոխազդեցությունն անտիգենի և հակամարմնի միջև՝ առաջ է բերում յերկարատև իմունիտետ:

Բացի լիզինից, կարմրուկով հիվանդն արտադրում է և ազլուտինիններ, վորոնք միկրոբները կպցնում են իրար և լեցնում մազանոթները. ցանն այդ յերեվույթի արտահայտություն է:

Բացի լիզինից, պետք է յենթադրել, վոր կա նաև մի ուրիշ հակամարմին—անտիտոքսին: Ըստ Նիկոլի, Դեբերյի, Գեկզվիցի ցանոտումից հետո նրանք հետըհետև կուտակվում են: Տաքությունն իջնելուց հետո 7-8 օր անց, նրանց քանակությունը լինում է մաքսիմալ:

Այդ է պատճառը, վոր կարմրուկից ապաքինվողի շիճուկն ամենամեծ կանխարգելիչ հատկություններն է ունենում այդ մոմենտում: 9 օրից հետո հակամարմինները սպառվում են, 30-րդ օրը նրանց թիվը զգալապես պակասում է:

## ԱՆՈՄԱԼ ԿԱՐՄՐՈՒԿ

Բացի տիպիկ կարմրուկից, կա և այնպիսին, վորի ընթացքը ներկայացնում է մի շարք կարևոր խտորումներ. այդպիսի կարմրուկը կոչվում է անոմալ կարմրուկ: Այդպես են կարմրուկի խիստ թեթև տեսակները, աբորտիվ (կրճատ) ձևերը:

Հայտնի են կարմրուկի դեպքեր, առանց մաշկային ցանի, առանց տաքության:

Կան դեպքեր, յերբ կարմրուկի զանազան շրջանները փոփոխված են. մեկը կարճատև է, մյուսը՝ յերկար, որինակ՝ ինկուբացիոն շրջանը յերկարած է, պրոդրոմալ նշանները չնչին են, առկա յե միայն ֆուլտոսկոպիկը: Այլ դեպքերում, ինկուբացիան նորմալ է, բացի աննշան ցանից, ուրիշ նշաններ չկան: Վերջապես լինում են դեպքեր, յերբ միայն բարձր տաքություն է լինում:

Այդպիսի անոմալ ձեվին է պատկանում կարմրուկի այն տեսակը, վորն առաջանում է այն դեպքե-

չուում, յերբ հիվանդին կանխարգել նպատակով շիճուկ են սրսկուում: Ինկուբացիան չերկարում է, հասնում է մինչև 30 օր: Պրոգրոսմալ շրջանի նշանները՝ հազ, հարբուխ, կոնյուկտիվիտ՝ հազիվ են նկատվում. Հոպլիկ կամ չի լինում, կամ չնչին է լինում: Տաքությունը հազիվ է հասնում 38-ի, ցանք յերբեմն առաջին արտահայտությունն է. նա աննշան է, տեղ-տեղ է նկատելի: Այսպես փոփոխված կարմրուկի ժամանակ տուբերկուլինի մաշկային ռեակցիան պահպանվում է, մի բան, վորը սովորական տիպիկ կարմրուկի ժամանակ անհետանում է:

Կան և անումալ ծանրագույն տոքսիկ ձեվեր, վորոնք միշտ մահացու են լինում: Դրանք յերեք տեսակի յեն լինում՝ ադինամիկ, հեմորրագիկ և դիսպնոյական ձեվեր:

Սդիկամիկ ձեվի դեպքում հիվանդի գիտակցությունը մթազնած է: Նա զառանցում է, քնկոտ է, պուլսը թույլ լիցք ունի և արագ է. տաքությունն անսովոր կերպով բարձր է. լեղուն չոր է. փախումներ և լուծ կա. ցանք սակավ է, դժգույն մանիշակագույն: Հեմոռագիկ ձեվի դեպքում անթիվ արյունային կետեր ու բծեր կան մաշկի վրա. արյունահոսություն՝ լորձաթաղանթներից, քթից, աղիքներից, չերիկամներից. 2-4 օրից հետո վերջանում է մահով:

Դիսպնոյական ձեվը բնորոշվում է գլխավորապես շնչահեղձությամբ, ցանն ուշանում է և յերևալիս՝ կապտավուն, ցիանոտիկ է լինում:

### ԲԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարմրուկի վիրուսը նախ և առաջ արտահայտվում է լորձաթաղանթների վրա, ուստի լորձաթաղանթներ-

ըն բորբոքումը կարմրուկի մշտական ուղեկիցն է: Կարմրուկի բարդություններն ել ամենից առաջ այդտեղ են նկատվում: Սկզբնական չերեվուլթները՝ կոնյուկտիվիտը, արախեիտը, բրոնխիտը՝ բարդություններ չեն, այլ ախտանիշներ, վորոնք արագ անհետանում են, յերբ ցանոտման վերջին շրջանում տաքությունն իջնում է:

Սակայն բավական հաճախ, այս կամ այն օրգանի լորձաթաղանթը լուրջ բարդություններ է տալիս. ամենահաճախակի բարդությունները շնչական ուղիներում են լինում՝ բրոնխիտ ու բրոնխոպնեմոնիա:

Վորքան փոքրահասակ է չերեխան, այնքան ավելի հաճախակի չեթոքերի բորբոքումը, այնքան ուրեմն վրտանգավոր է կարմրուկը, վորովհետև կարմրուկի մահացության ամենագլխավոր պատճառը թոքերի բորբոքումն է: Յերբեմն համաճարակների ժամանակ թոքերի բորբոքումն առանձնապես հաճախակի չերեուլթ է և մահացությունը նրանից բավական մեծ տոկոս է կազմում:

Հիգիենիկ պայմաններն ել կարևոր դեր են կատարում այդ հարցում. անմաքուր ոդում թոքերի բորբոքումն ավելի հաճախ է առաջանում: Դրանով պետք է բացատրել այն, վոր բոլոր հեղինակների կարծիքով կարմրուկը տանն ավելի լավ է ընթանում, քան հիվանդանոցներում: Ըստ Նոբելուրի՝ մահացությունը տանը հավասար է 10-11 տոկոսի, յերբեմն 20 տոկոսի: Այնինչ բստ վիճակագրական տվյալների, 1907-1917 թ. թ. Պետրոգրադի մանկական հիմնարկներում մահացության տոկոսը հասել է 40-60 տոկոսի, իսկ ըստ Փիլատովի, ծանր համաճարակների ժա-

մանակ, հիվանդանոցներում մահացութեան տոկոսը հասել է 30 տոկոսի:

Կոնստիտուցիոնալ վիճակն ևս անմասն չէ. այն մանուկները, վորոնք ունեն վորոշ կոնստիտուցիոնալ սակավարժեքութուն, նրանց մոտ կարմրուկային թոքաբորբը կարող է ակտիվացնել հանդարտ ընթացող տուբերկուլյոզը, թոքերի տուբերկուլյոզ առաջացնել կամ հասցնել մինչև տուբերկուլյոզային մենինգիտի:

Կարմրուկը խիստ վտանգավոր ընթացք է ստանում, յերբ նրան միախառնվում է կապույտ հազը կամ քութեղը:

## Լ Ա Ր Ի Ն Գ Ի Տ

Կարմրուկային լարինգիտը սկսվում է սովորաբար դեռ պրոդրոմալ շրջանում. նրա ախտանիշներն են՝ ցավոտ հազ, խոպոտ ձայն. յերբեմն կարող է ստենոզ առաջանալ. կոկորդում այտուց է առաջանում ձայնալարերի տակ. սակայն այդ բորբոքումը թեթեւ է լինում, կատառալ ընուլթի: Ցանը թոշնելուց հետո ձայնը հստականում է, հազը մեղմանում:

Ուրիշ դեպքերում, մանավանդ մինչև 2 տարեկան հասակը, հասարակ կատառալ բորբոքումն ավելի լեքարդանում, լորձաթաղանթը խոցոտվում է, ձայնալարերի վրա կամ կոկորդի լորձաթաղանթի այլ տեղերում առաջանում են խոցիկներ, վորոնք յերկարատե խոպոտութեան և անձայնութեան պատճառ են դառնում և նուպաներով ընթացող ստենոզ են առաջացնում, վորը շաքաթներ է տեղում:

Պատահում է նաև լարինգիտի մի տեսակ, վորը կոչվում է կեղծ կրուպ. վերջինիս ժամանակ թեև նը-

շանները վորոշ չափով նման են լինում իսկական կրուպին, դիֆթերիկ կրուպին, սակայն դիֆթերիայի բացիլներ չեն լինում: Այդ դեպքում տեղ—տեղ կըղզիանման դորշ սպիտակավուն փառեր են նկատվում, յերբեմն հաստ, յերբեմն բարակ, վորոնք նստում են մակայեղվի տակ, ձայնալարերի վրա, յերբեմն շնչափողում և բրոնքներում:

Այդ խոցերն ու փառերը առաջանում են շնորհիվ ուղեկից մանրենների, վորոնց թվում առանձին դեր են կատարում ստրեպտոկոկները:

Վերջապես կարմրուկը կարող է բարդանալ իսկական դիֆթերիայով. կարմրուկի ժամանակ լորձաթաղանթը դառնում է հեշտ խոցելի՝ առհասարակ դանազան մանրենների համար, ի թիվս վորոնց և դիֆթերիայի բացիլի: Դիֆթերիան հաճախ անցնում է ըմպանով հետքեր չթողնելով և կանգ է առնում կոկորդում:

Իսկական, դիֆթերիկ կրուպի ախտանիշները հիմնականում նույնն են, ինչ վոր կեղծ կրուպի ժամանակ. հաջացող հազ, խզված ձայն, անձկութուն, վորոնք սակայն համառ որինաչափութեամբ հետդեպտե աճում, զարգանում են:

Ուստի սխալներից խուսափելու համար, փորձված բժիշկը չպետք է վարանի այդպիսի դեպքերում, չըսպասի լորձի բակտերիոլոգիկ քննութեան և ժամանակին հակադիֆթերիկ շիճուկ ներարկի:

## Բ Ր Ո Ն Խ Ի Տ

Կարմրուկի հենց սկզբնական շրջանում նկատվում են շնչական ուղիների վերին մասերի բորբոքման նը-

շաններ՝ հարբուխ, լարինգիտ, արախեիտ, Դրանք ինք-  
նին բարենպաստ հանգամանքներ են շնչական ու-  
ղիների վարի մասերի՝ բրոնքների բորբոքման հա-  
մար: Բրոնխիտը բնորոշվում է չոր կամ թաց խոշոր  
և միջին ցրված խզզոցներով բրոնքներում. վորոշ  
չափով այդպիսի բրոնխիտը կարմրուկի ախտանշանե-  
րից մեկն է: Նա դառնում է բարդութուն, յերբ տա-  
քութունը յերկար ժամանակ չի իջնում, յերբ նա դե-  
պի մանր բրոնքներն իջնելու հակում է ցույց տալիս,  
յերբ նա անցնում է սազանութները: Այդ ժամանակ  
մանր բրոնքները լցվում են բորբոքման սեկրեցի-  
այով և փակվում են, արվեոլները սգ չի անցնում:  
Յերբ բորբոքման պրոցեսը հասնում է արվեոլներին,  
այն ժամանակ եպիթելն իջնում է, լորձաթաղանթա-  
յին սեկրետ է առաջանում, վորով լեցվում է արվեո-  
լը և թոքերի բորբոքում է սկսվում:

### ԹՈՔԵՐԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ

Կարմրուկի ամենահաճախակի և ամենավտանգա-  
վոր բարդութունը թոքերի բորբոքումն է: Նա այն-  
քան ավելի հաճախ է պատահում, ինչքան ավելի փոքր է  
յերեխան, ինչքան նա ավելի թույլ է: Այդ բարդու-  
թունն առավելապես ախտահարում է մինչև 4 տա-  
րեկան հասակը. ծծկերների հասակում նրա բացակա-  
յությունը բացարձակապես բացառիկ չերկուցթ է:

Թոքերի բորբոքումը թոքային հյուսվածքում  
զարգանում է փոքրիկ ակուրներով, բազմաթիվ, դա-  
նազան բլթակներում, ուստի այսպիսի բորբոքումը  
կոչվում է բլթակային բորբոքում: Այդ ձևի թոքերի  
բորբոքումը առաջանում է բրոնքներից, ուստի նա

ունի և մի ուրիշ անուն՝ բրոնխո-թոքերի բորբոքում,  
կամ բրոնխոպնեվմոնիա:

Կլինիկորեն նա զարգանում է դանդաղ, աստիճա-  
նաբար: Տաքութունը յերկարատե է՝ 2-3 շաբաթ և  
ավելի. ընթացքն անկանոն է, քմահաճ տատանում-  
ներով, տաքութունը մերթ իջնում է, մերթ բարձ-  
րանում մինչև 39-40°:

Սովորական բրոնխիտի ժամանակ տաքութունը  
39°-ից չի անցնում, իսկ թոքերի բորբոքման ժամա-  
նակ նա հասնում է 40°-ի և ավելի բարձր է լինում:

Մինչև բլթակային բորբոքման յերևան գալը, նը-  
կատվում է կապիլյար բրոնխիտ, շնչահեղձութուն,  
առաջանում է քթի, շրթունքների խաղ, միջկողային  
տարածութունների ներփքում, ցիանոզ, լսվում են  
բազմաթիվ մանրարուշտ խզզոցներ: Յերբ թոքերի  
բորբոքման ակուրները միանում են իրար՝ բավակա-  
նաչափ տարածության վրա, այն ժամանակ թոքի  
վրա ստացվում է ձայնի խլացում, բրոնխիալ շնչա-  
ռություն և մանր խզզոցներ են լսվում:

Թոքերի բորբոքումը սովորաբար զարգանում է  
ցանի թոշնումից հետո, սակայն նա կարող է առաջա-  
նալ և պրոդրոմալ շրջանում: Վերջին դեպքում նա  
ավելի վտանգավոր է:

Յերբեմն թոքերի բորբոքումը զարգանում է արագ,  
բռնում է թոքի մի ամբողջ բլթը և ընթանում է  
կրուպոզ բորբոքման նման. հաճախ այլ կողմից է  
սկսվում՝ ստորին բլթում: Ջերմութունը հասնում է  
40-41°, այդ բարձրության վրա նա մնում է մի շա-  
բաթ և 5-7-9-րդ օրը վերջանում է ճգնաժամով, հե-  
վոց է սկսվում, ցավ՝ կողքում, կարող է փսխում լի-

ներ. Ընդհանուր վիճակը ծանր ե. չերբեմն լինում են ցնցումներ: Շուտով նկատվում ե բթացում, բրոնխիալ շնչառություն, ձայնի դողոցի ուժեղացում:

Կրուպոզ բորբոքումը կարմրուկի ժամանակ վերջանում ե ավելի հաճախ առողջացմամբ, քան կատառալը:

### Ա.ԿԱՆՋԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ

Կարմրուկի ժամանակ ներքին ականջի բորբոքումը, մեկ կամ յերկու կողմից, հաճախակի մի բարդություն ե. ականջի այդ բորբոքումը հատուկ ե և քութեչին, վորի ժամանակ հաճախակիությունն ավելի մեծ ե, ընթացքն ել ծանրագույն:

Մեծահասակները դանդաղում են ցավից: Ծծկերներն անհանդիստ են լինում, հաճախ նվում են: Ականջի խխուճը սեղմելիս նրանք կնճռոտում են դեմքը, լաց են լինում: Թմրկաթաղանթն ականջի գնդնման ժամանակ կարմրած ե լինում և դուրս ցցված. տաքությունը բարձր ե. յերբեմն թմրկաթաղանթը պատվում ե շճային կամ շճա—թարախային արտադրուկ ե արտահոսում: Վորոշ դեպքերում բժիշկը ինքըն ե հատում թաղանթը և ուղի բանում թարախի համար:

### Ա.ՐՅՈՒՆ Ա. ՀՈՍՈՒՄ

Կարմրուկի ժամանակ շատ հաճախակի յերևույթ ե արյունահոսություն քթից. յեթե արյունահոսությունը միայն այդ ձևով ե տեղի ունենում, այդ դեպքում նա մի առանձին նշանակություն չունի և բացառիկ դեպքերում ենա վտանգում հիվանդի կյան-

քը, յերբ նրան արյունաքամ ե անուժ: Սակայն յեթե քթից առաջացող արյունահոսության հետ միաժամանակ արյունագեղումներ են տեղի ունենում մաշկի և լորձաթաղանթի վրա, այդ դեպքում արյունահոսությունը դառնում ե սպառնալի, վտանգավոր յերեկույթ:

### ԲԵՐԱՆՀԱՐԻՆՔ ՅԵՎ ՆՈՄԱ

Յերբեմն բերանի խոռոչում խոցիկներ են առաջանում. դրանք գլխավորապես ապաքինման շրջանումն են լինում: Դա ունի յերկու պատճառ. առաջինը, գըլխավորը հիվանդի ընդհանուր թուլությունն ե, նրա աննդառության խանդարումը, նյութասպառությունը, նրա դիմադրողական ընդունակությունների անկումը, մյուս պատճառը լուրջ և կանոնավոր խնամքի բացակայությունն ե:

Այդ յերկու պատճառների խաչաձեւումից առաջանում են ամեն տեսակի բերանհարինքներ, աչգ թըվում հասարակ խոցավոր բերանհարինքը և վերջինիս ամենածանր տեսակը, վոր եռուս անունն ե կրում,

Նոման առաջանում ե վոչ թե առողջ, ամբակազմ յերեսաների մոտ, այլ նրանց վորոնք ապրո մ են փակ հիմնարկներում, անառողջ ողուժ, անբավարար են սնվում, հիվանդություններ են անցկայրե, վորոնցից հյուժվիլ են: Այդ հիվանդություններից կարեավորագույնը կարմրուկն ե:

Նախ բերանի լորձաթաղանթի վրա խոցային բորբոքում ե առաջանում. խոցը բացվում ե լնդերքի վրա. յեթե անմիջապես հա կավոր միջոցներ ձեռք չեն առնվում, խոցն արագընթաց զարգանում ե, սկը-

առւմ ե ընդերքի փտումն (զանգրենա): Գանգրենան ընդերքից անցնում ե այտին, վորի վրա սկզբում կապտավուն բիծ ե նշմարվում, հետո բծի շուրջն ուռչում ե. սկսվում ե նեխումն և վատ հոտ ե առաջանում: Այտի քայքայումն ուժեղանում ե և այտը ծակվում ե:

Սովորաբար նոման մահ ե բերում. մահն առաջա-  
նում ե կամ լուծից, կամ թոքերի բորբոքումից:

## Լ Ո Ւ Ծ

Ինչպես վերը նշել ենք, կարմրուկի վիրուսը մը-  
ղում ունի վոչ միայն դեպի շնչական ուղիները, այլև  
մարսողական ուղիների լորձաթաղանթները: Այդ  
ե պատճառը, վոր լուծը պատկանում ե կարմրուկի  
բարդութունների շարքին:

Վորքան ավելի փոքր ե յերեխան, այնքան ավելի  
զգայուն են նրա մարսողական ուղիները, այնքան ա-  
վելի հաճախ ե կարմրուկը լուծ առաջացնում:

Յեթե հիվանդը մինչև կարմրուկն ունեցել ե լուծ,  
մանավանդ լորձաարյունային, ապա այդպիսին կրկըն-  
վում ե: Բացի այդ, սովորական աննշան լուծը կարմ-  
րուկի ժամանակ կարող ե չերկրորդային ինֆեկցի-  
այի աղդեցության ներքո փոխվել արյունային լու-  
ծի:

Կարմրուկը սովորաբար չի ախտահարում յերե-  
կամները: Ախտահարման դեպքերը բացառիկ են:

## ՈՒՂԵՎԻ ԲՈՐԲՈՒԲՈՒՄ (ԵնցեՖալիս)

Վերջին տարիները հաճախակի յեն ներվային սխ-  
տեմի բարդութունների դեպքերը: Այդ տեսակետից

հետաքրքրական ե նշել, վոր ներվային սխտեմի ախ-  
տահարման յերեվոլյութներ՝ գիտակցության կորուստ,  
մթազնում, յերկարատե զառանցանք, բազմանվազ  
ցնցումներ, ուղեղային յերեվոլյութներ, կրկնակի փըս-  
խումներ առանձնապես աչքի յեն ընկնում նեվրոպա-  
թիկ յրեխաների մոտ:

Բագինակին նկարագրել ե հիվանդության մի դեպք,  
վորի ժամանակ նա դիտել ե վերին ծայրանդամների  
տետանիկ ցնցումներ, շլություն, ընդհանուր ցնցում-  
ներ:

Հենոթը նույնպես նկարագրել ե մենինգիտի մեկ  
դեպք և մկանների շանթանման կծկումներ:

Վերջին տարիների գրականության մեջ առանձնա-  
պես շեշտվում ե հետկարմրուկային ենցեֆալիտի  
դեպքերի աճը: Որինակ՝ Բոսսեն ի մի յե ժողովել  
այդ հարցի շուրջը յեղած գրականությունը և նկա-  
րագրել ե հետկարմրուկային ենցեֆալիտի, մենինգո-  
ենցեֆալիտի վեց դեպք: Ներվային սխտեմի ախտա-  
հարումը տեղի յե ունեցել ցանի թոշնումից հետո,  
բոլոր հիվանդներն ապաքինվել են:

Մուսսերը և Հուուզերը նկարագրել են հետակարմ-  
րուկային ենցեֆալիտի 8 դեպք, վորոնցից 6-ը մա-  
հով են վերջացել: Հերձման ժամանակ ուղեղային  
հյուսվածքում բազմաթիվ կետավոր արյունազեղում-  
ներ են նկատվել:

Ըստ Շիրինյանի՝ Բտալիայում ենցեֆալիտի 2 տո-  
կոսը պատկանում ե կարմրուկին:

Մենք ևս դիտել ենք հետկարմրուկային ենցեֆա-  
լիտի մի դեպք Յերևանում: 1932 թվին մանկական  
Վլինիկայում, ցանի թոշնումից 10 ուր անց, նկատվել

ե չափավոր տաքութիւն, փսխումներ, աչքերի շուշ-  
թիւն, բրերի անհավասարութիւն, յերկու կողմերի  
իջնում (փթոզ), քնկոտութիւն: Հիվանդն առողջացե-  
լու: Հետագայում բարդութիւններ չեն նկատուել:

### ԿԱՐՄՐՈՒԿԻ ՎԱՂԱԺԱՄ ԴԻՍԳՆՈՍՏԻԿԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կորուսուկի վաղածամ դիագնոստիկայի նշանակու-  
թիւնը միայն կլինիկայի հասար չե. ավելի մեծ է  
նրա եպիդեմիոլոգիկ արժեքը: Հիվանդութիւնը ժա-  
մանակին ախտորոշելով մենք վաղորոք մեկուսացնում  
ենք հիվանդին և կանխում վարակի հետագա տարա-  
ծումը:

Այդ ե պատճառը, վոր հնուց արդեն բժիշկները  
միտքը վորոնել է այնպիսի ախտանիշներ, վորոնցով  
հնարավոր լիներ կարմրուկի ճիշտ դիագնոզ գնել հի-  
վանդութեան պրոգրոմալ շրջանում: Այդպիսի յերկու  
ախտանիշ առայժմ վորոշակի հայտաբերված են: Առա-  
ջինն է պրոգրոմալ ենանթեմա. սակայն այդ ախտա-  
նիշը հաճախ բացակայում է, մանավանդ փոքրահա-  
սակների մ. տ. կամ թե, չերեան է գալիս համարյա  
միաժամանակ ցանի հետ:

Ախտանիշը յերեան է գալիս ցանը յերեալուց 24-  
36, անգամ 48 ժամ առաջ փափուկ քիմքում: Փափուկ  
և կարծր քիմքի նորմալ լորձաթաղանթի վրա յերե-  
վում են փոքրիկ կարմիր բծեր՝ գնդաձեղի գլխից  
մինչև վոսպի մեծութեան: Այդ ձևով նրանք մնում են  
մի օր. վորից հետո համատարած կարմրութիւն է  
առաջանում:

Յերկրորդն է Ֆիլատով—Կոպլիկի ախտանիշը՝ 1895  
թվին այդ հայտնաբերել է Ֆիլատովը, 1896 թվին՝

ամերիկացի Կոպլիկը: Դրա համար ել ախտանիշը  
կրում է յերկու հեղինակների անունը:

Յերկու—յերեք օր մաշկի ցանից առաջ շրթունք-  
ների և այտերի լորձաթաղանթի վրա եպիթելիումը  
մանր կերպով թեփոտում է: Ուշադրութեամբ գննե-  
լիս նկատուում է հետեւյալը, ասում է Ֆիլատովը.—  
«լորձաթաղանթի վրա ցանված են լինում շատ նուրբ  
մանրիկ ճեմակավուն թեփուկներ (շրթունքների, այ-  
տերի, լնդերի վրա): Դրանք թափվող եպիթելիումի  
պատաստիկներն են»:

Կոպլիկը հետեւյալ խոսքերով է նկարագրում. «Այդ  
ցանը բաղկացած է անկանոն վառ կարմրագույն բը-  
ծերից, յուրաքանչյուր բժի վրա կենտրոնում կարելի  
է նշմարել մանրիկ կապտավուն սպիտակ բժիկ: Ըս-  
կզում յերեվում են 2-3 կամ 6 փոքրիկ վարդագույն  
բծեր՝ կենտրոնում սպիտակ կապտավուն բժիկներով:  
Բծերն ունեն կարմիր յեղրեր: Յերեքն այդ ցանն  
այնքան սակավաթիվ է և այնպես թույլ է գունա-  
վորված լինում, վոր կարելի է տեսնել միայն ցերեկ-  
վա լույսի տակ:

Այդ ցանն,—ասում է Կոպլիկը,—բացարձակապես  
պաթոգենումիկ է կարմրուկի համար:

Աժմ ամենուրեք ընդունված է, վոր այդ ցանը  
անկասկածելիորեն բնորոշում է կարմրուկը՝ պրո-  
չրոմալ շրջանում:

Ֆիլատով—Կոպլիկի բծերը յերեան են գալիս մաշ-  
կային ցանից 2-3 օր առաջ. նախ նրանք յերեվում  
են սեղանատամների կողքին, լորձաթաղանթի վրա,  
պա անցնում են շրթունքների վրա: Ճանի յերեվան  
զալուց հետո բծերն անհետանում են:

Ջրարդված կարմրուկը սովորաբար բարձրժաց և լինում: Մահացությունը կախված է բարդություններից: Բարդությունները կարող են առաջանալ արտաքին ֆակտորների ազդեցութունից՝ ցրտի, բնակչության խտության, վատառողջ ողի, այլ ինֆեկցիաներից: Բարդությունները կարող են պայմանավորվել կոնստիտուցիոնալ տվյալներով (ոսխիտ, թերասուն, թուլակազմ մարդիկ, նոր անցկացրած հիվանդություններ, տուբերկուլոզ):

Պրոգնոզի համար հիմնական պայմանն է հասակը, պրոգնոզն առանձնապես լուրջ է մինչ 2 տարեկան հասակ ունեցողների համար:

Համաճարակի բնույթն էլ կարևոր հանգամանք է պրոգնոզի համար: Ծանր համաճարակը, բազմաթիվ բարդություններ տվող համաճարակը, մեծ մահացություն տվող համաճարակը պրոգնոզը դարձնում են առավելապես զրուչավոր: Հարուցիչն այդ դեպքում այնքան ազդեցալի է, այնքան գործոն:

Կարմրուկի միաձուլումն ուրիշ ինֆեկցիաների հետ՝ դիֆթերիայի, քուբեշի, տիֆի, զրիպի՝ զգալիորեն բարդացնում և կարմրուկը և խիստ ավելացնում մահացությունը:

Թ Ե Ր Ա Պ Ի Ա

Բուժման մեջ, լավ խնամքը և հիգիենիկ պայմաններն առաջին տեղն են զբաղում: Մնյուրի ռեժիմը խիստ կարևոր նշանակություն ունի: Այդ տեսակետից անհրաժեշտ է հիվանդին առատորեն ջրով և առ-

հասարակ հեղուկային նյութերով սնել: Ողի մաքրությունը նմանապես անադին նշանակություն ունի. անհրաժեշտ է հիվանդի սենյակում լավ սրահափություն կատարել. միայն պետք է խուսափել հիվանդին հանկարծակի սառեցնելուց: Սենյակի ողի ջերմությունը պետք է լինի 28°: Հիվանդը լուսավախ է լինում. պետք է յերեսը դարձնել լուսամուտի հակառակ կողմը: Լուսամուտը վարագուրելը ֆլասակար է: Լուծողականից պետք է խուսափել, վորովհետև աղիքների լորձաթաղանթը կարմրուկի ժամանակ արյունալից է (հիպերեմիկ) լինում:

Մաշկի հիգիենան առանձին ուշադրության պիտի արժանանա. մարմինը պետք է ջրով շփել, սպիտակեղենը շուտ-շուտ փոխել:

Բերանի խոռոչի խնամքը նմանապես մեծ ուշադրության է արժանի. փոքրիկների բերանը ամեն անգամ ուտելուց հետո պետք է ջրով, թեյով ողողել. հասակավոր յերեխաները պետք է իրենց ատամները մաքրեն և բերանը ողողեն:

Աչքերը և աղջիկների սեռական որդանները պետք է լվանալ: Վաննաներ էլ կարելի յե ոգտագործել, մանավանդ թոքերի բորբոքման ժամանակ:

Կարմրուկն անցնելուց հետո հիվանդը անկողինը կարող յե թողնել տաքությունն իջնելուց 3-4 օր հետո:

Ամառը հիվանդին կարելի յե մաքուր ողի մեջ գուրս բերել: Ձմեռը կարելի յե հիվանդի սենյակը թարմ ող ներս թողնել, յեթե հազն աննշան է:

Կարմրուկի ժամանակ զեղորայք նշանակում են միայն այն զեպքերում, յերբ բարդություններ կան:

## ՊԱՅՔԱՐ ԿԱՐՄՐՈՒԿԻ ԳԵՄ

Կարմրուկը յուրատեսակ ինֆեկցիա է. նրա եպի-  
գեմիլոգիան առանձնահատուկ է:

Պաշքարի սովորական միջոցները ինֆեկցիաների  
գեմ, ինչպիսին են՝ վաղաժամ ախտորոշումը, արագ  
մեկուսացումը, լիովին չեն արդարանում:

Կարմրուկն սկսում է վարակել շրջապատողներին  
հենց այն ժամանակ, յերբ վաղաժամ դիագնոզի նշան-  
ները քիչ են արտահայտված. նրա վիրուսն արագա-  
շարժ է. նա միաժամանակ բազմաթիվ անհատների չե  
վարակում, վորովհետև յերեխաները կարմրուկով հեշ-  
տությամբ են վարակվում:

Այդ է պատճառը, վոր սովորական միջոցներով  
կարմրուկի գեմ պաշքարելը դժվարություններ են եր-  
կայացնում:

Մեզ մնում է ձեռնարկել այնպիսի միջոցներ, վոր-  
ոնք կանխում են կարմրուկը, կամ վորոնք մեղմա-  
ցնում են հիվանդությունը, դարձնում են թեթև:

Յերիու կարգի միջոցներ կան այդ նպատակի հա-  
մար՝ հիվանդության լայն տարածումը և ծանր ըն-  
թացքն կանխարգելող միջոցներ ու վարակի ախտ-  
ները վոչնչացնող միջոցներ:

## ԿԱՐՄՐՈՒԿԻ ՏԱՐԱԾՄԱՆԸ ԽԱՆԳԱՐՈՂ ՄԻ- ՋՈՑՆԵՐ

Կարմրուկի վիրուսը գտնվում և պահվում է մար-  
դու մեջ, ուստի միայն վորոշ մարդկանց անախտըն-  
կալությունն է, վոր պահպանում է նրանց. կարմ-  
րուկի հետագա վարակման տարածումը դրանով է  
պայմանավորվում:

Պիրքեն առաջարկել է՝ կարմրուկը միանգամից  
լիկվիրացիայի յնթարկելու նպատակով համաշխար-  
հային կարանտին նշանակել հիվանդների ու նրանց  
շրջապատողների համար, վորովհետև կարմրուկով հի-  
վանդը վտանգավոր է իր շրջապատի համար միայն  
12 ուր. Այդ միտքը թեև ճշմարիտ է, բայց անիրա-  
զորձելի յե այն:

Կարանտինը փորձված միջոց է այն քաղաքների  
նկատմամբ, վորոնք հեռավոր կղզիների վրա յնս գլու-  
նվում: Այդպես է յեղել Նոր Զելանդիայում, Մազա-  
զասկարում:

Այն վայրերում, ուր բազմապիսի կենդանի հարա-  
բերություններ գոյություն ունեն դրսի աշխարհի  
հետ, կարանտինները նպատակին չեն ծառայում: Մնում  
է մի ուրիշ միջոց— ստեղծել բնակչության իմունի-  
տետ, վորպեսզի ախտընկալներ չմնան: Դրան կարելի  
է հասնել սպեցիֆիկ պրոֆիլակտիկայով, և այդպիսին  
այժմ գոյություն ունի. միայն թե նրա ընձեռած  
հնարավորությունները սահմանափակ են: Պրոֆիլակ-  
տիկան կարելի յե կիրառել սահմանափակ թիվ կազմող  
խմբերի մեջ: Այդ է պատճառը, վոր ներկայումս մենք  
դեռ չենք կարող յերազել սպեցիֆիկ պրոֆիլակտիկա-  
յով իրական պ. յբար մղել կարմրուկի համաճարակի  
դեմ: Մնում է մեզ կենտրոնացնել մեր ուշադրու-  
թյունը համաճարակի թափը նվազեցնելու վրա, կոխի  
մղելով բնակչության խտության դեմ և ապա՝ ծանր  
կարմրուկը թեթեվացնել, դարձնել այն անոմալ մի-  
հիվանդություն:

Մի շարք միջոցներ կան, վորոնք մեղմացնում են  
կարմրուկի ծանր տեսակները և կանխարգելում են

բարգուժյունները: Պետք է վանել արտաքին շնասահար ֆակտորների ազդեցությունը. այդպիսի գործոններ են՝ ցուրտը, վատ սնունդը, անմաքրությունը, վատ խնամքը, ուրիշ վարակների առկայությունը՝ Ահա այդպիսով կարելի չէ թեթեվացնել կարմրուկի ծանր տեսակը և կանխել բարգուժյունները:

Մինչև 2 տարեկան հասակ ունեցող յերեխաներին, վատ սնվածներին, ռախիտիկներին, վատ բնակարաններում ապրողներին՝ նպատակահարմար է պաշտպապանել պրոֆիլակտիկ մեթոդով:

### ՀԻՎԱՆՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

Հիվանդություն կանխարգելումը կարող է իրականանալ մի շարք միջոցառումների կոմպլեքսով. նրանք կազմում են մի շղթա, վորի չուրաքանչյուր ողակն ունի իր տեղը և նշանակությունը. այդ միջոցառումները հետևյալներն են.

1. Հիվանդների ցուցակագրությունը:
2. Պարտադիր արագ ծանուցում:
3. Հանրամատչելի բարձրորակ բուժօգնություն տանը՝ հիվանդության բնույթը վաղորոք պարզելու և հիվանդներին հայտարարելու համար:
4. Կանոնավոր հիմքերի վրա դրված սանիտարական կազմակերպությունը:
5. Կանոնավոր կազմակերպված արանսպորտ և հիվանդի մեկուսացում:
6. Կարմրուկի հիվանդի հետ թեկուզ կարճ ժամանակ շփման մեջ յեղածների մեկուսացում:
8. Բարեկարգ հիվանդանոց՝ մեկուսարան—բաժանմունքով:
9. Սան—լուս աշխատանքը բնակչության և բուժ քանձակազմի համար:
10. Արյան հավաքակալան:
11. Հիվանդների սերոպրոֆիլակտիկա:

### ԿԱՐՄՐՈՒԿԻ ՇԻՃՈՒԿԱՅԻՆ ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿԱՆ

Իտալացի Չենչին 1901—1906 թ. թ. առաջին անգամ կարմրուկի դեմ, պրոֆիլակտիկայի նպատակով, կարմրուկից նոր առողջացողի արյունը ներարկել է առողջ յերեխաներին և դրական արդյունք է ստացել:

Հուլի Բերգերն ու Անդերսոնը կապիկների վրա կատարած իրենց փորձերով ապացուցել են, վոր յերբ կապիկը կարմրուկ է անցկացնում, նա գառնում է իմուն և կրկնաբար չի հիվանդանում. այդ նշանակում է, վոր այդպիսի կապիկ արյան մեջ կան սպեցիֆիկ հակամարմիններ:

1916 թվին Շ. Նիկոլը և Կոնսելլոն այդ փորձերից հետո ապաքինվողի (բեկոնվալեսցենտի) արյան շիճուկը թունիսում գործադրել են կարմրուկի եպիդեմիայի ժամանակ: Առաջին փորձը արել են մի ընտանիքում, ուր 4 յերեխա չէ յեղել. յերեք մեծերը հիվանդացել են հուլիսի 2-ին, 3-ին, 5-ին, չորրորդը՝ կրտսերը դեռ հուլիսի 12-ին յեղել է առողջ. նա յչետք է հիվանդանար հուլիսի 16-ին: Հուլիսի 12-ին և բեխան ստացել է մեծի շիճուկը 4 cm<sup>3</sup>, վորից արյունը վերցված է յեղել առողջացման 7-րդ օրը: 13-ին յերեխան նորից ստացել է նույն դոզան. չնայած վոր կրտսերը շարունակ յեղել է հիվանդացողների մեջ, ըայց մնացել է առողջ: Մի քանի օրից հետո շիճուկը կիրառվել է և յերկրորդ ընտանիքում, ուր 2 տարեկան յերեխային վարակ էր սպառնում իր յեղբորից, վորը հիվանդացել էր հուլիսի 29-ին: Ոգոստոսի 5-ին նա ստանում է 5 cm<sup>3</sup> և մնում է առողջ:

Դրանից հետո, հետևյալ տարիներին ընթացքում, բոլոր փորձերը հաջող են անցել: Նիկոլն ու Կոնսելյ-

ը 1918 թվին առաջարկեցին կիրառել պրոֆիլակտիկայի այդ միջոցը: Այդ միջոցը նրանք առանձնապես հանձնարարում էին թույլ չերեխաների և հիվանդանոցներում գտնվող չերեխաների համար:

Լուսինից և տուբերկուլոզից ապահովելու համար, նրանք խորհուրդ էին տալիս ներարկվող արյունը ֆիլտրել:

1919 թվին Ամերիկայում Ռիչարդսոնն ու Կոննորը կրկին են հիշյալ դիտողութունները և ստացել են փայլուն հետևանքներ:

Մյունխենի մանկաբույժ Դեզկվիցն սկսել է իր դիտողութունները կարմրուկի սերոպրոֆիլակտիկայի վերաբերմամբ 1919 թվի հունիսին. նա առաջին յեռանդ և տոկունութուն է ցուցաբերել իր պրոպագանդի մեջ, այդ պատճառով էլ նկարագրված մեթոդը ստացել է Դեզկվիցի անունը:

Դեզկվիցը 1920 թվին հանդես է գալիս յերկու ղեկուցումով. 1) Հակակարմրուկային շիճուկի կիրառման 25 դեպք, 2) 172 դեպք. բոլոր այն չերեխաները, վորոնք շիճուկ են ստացել ինկուբացիայի 2-6 օրերին և չեն հիվանդացել:

Դեզկվիցը հաստատել է, վոր պրոֆիլակտիկայի համար բավական է միանվագ ներարկումը. կանխարգելիչ դրդան Դեզկվիցը համարում է 3cm<sup>3</sup> շիճուկ, չեթե վերջինս վերցված է այն մոմենտին, յերբ առողջացողի որդանիզմում հակամարմինների կուտակումն առավելագույն չափերի չէ հասել: Այդպիսի մոմենտ է համարվում տաքության իջնելուց 7-10 օր հետո:

Իմունիտետի տեվողութունն այդպիսի պատվաս-

ից հետո, ըստ զանազան հեղինակների, տարբեր են լինում: Մեծամասնությունը հաշվում է 3-4 շաբաթ: Սակայն կան դիտողություններ այն մասին (Դեզկվից, Դանիլևիչ, Կատո), վոր դեռ 2-2 1/2 և նույնիսկ 9 ամիս կարելի չէ այդ մեթոդի պրոֆիլակտիկ էֆեկտը դիտել:

Լիոնը պնդում է, վոր յերբեմն կարելի չէ 2-3 տարի իմունիտետ ունենալ: Բերինգը կարծում է, վոր սերոպրոֆիլակտիկայից յերկարատև իմունիտետ է առաջ գալիս այն դեպքում, յերբ ներակվում է հոմանիշ (հոմոլոգ) շիճուկ:

Դեզկվիցի ղեկուցումներից հետո զանազան յերկրներում այդ մեթոդը գործադրել են բազմաթիվ հեղինակներ՝ հազարավոր հիվանդներ յերաբերմամբ: Ամենքն էլ միաբերան պնդում են, վոր Դեզկվիցի մեթոդը հիրավի գործոն պրոֆիլակտիկ միջոց է:

Մերոդի կիրառման նեխվամենքը կարելի չէ բաժանել 4 խմբի:

1-ին խումբ. հետևանքը բացարձակ է. պատվաստածը չի հիվանդանում:

2-րդ խումբ. շիճուկը թուլացնում է հիվանդությունը, նրան տալիս է արբորիվ ձև, յերկարացնում է ինկուբացիան և տալիս է թույլ հիվանդացում:

3-րդ խումբ. շիճուկն ազդեցություն չի գործում:

4-րդ խումբ. շիճուկը բարդություններ է տալիս:

Շիճուկի ազդեցությունը կախված է մի շարք մոմենտներից. շիճուկը պետք է ունենա իր մեջ հակամարմինների առավելագույն քանակություն, ուստի արյունը պետք է վերցնել այն ժամանակ, յերբ հակամարմինները ամենամեծ քանակությամբ են լինում:

Ըստ Դեբրեյի և Դեկզվիցի՝ այդ մոմենտը վրա յեհաս-  
նում տաքությունն իջնելուց 7-10 որանց, ըստ Նորե-  
կուրի և Պարաֆի՝ 10-12 որ:

Ավելի լավ է վերցնել շիճուկների խառնուրդ գո-  
նե 3 հիվանդից, վորովհետև զանազան շիճուկներում  
հակամարմինների քանակությունը տարբեր է լի-  
նում:

Յերկրորդ մոմենտը—վաղաժամ ներարկումն է-  
վորքան շուտ է ներարկվում, այնքան հետևանքն ա-  
վելի հաջող է լինում:

Մինչև ինկուբացիայի չորրորդ որը ամենամեծ  
արդյունքն է ստացվում, 5-րդ կամ 6-րդ որն ար-  
դյունք կարելի չէ ստանալ այն դեպքում, յեթե դո-  
զան ավելացվի, սկսած 7-րդ որից հետևանքը կաս-  
կածելի է:

Յերրորդ մոմենտը՝ ներարկող շիճուկի զոզան է:

Մինչև ինկուբացիայի 4-րդ որը չորս տարեկան  
յերեխայի համար պահանջվում է մի զոզա. 5-րդ կամ  
6-րդ որը հարկավոր է 2 զոզա. 7-րդ որը՝ արդեն 3  
զոզա: Մի զոզան հավասար է 3  $\text{cm}^3$ :

Յեթե յերեխան 4 տարեկանից մեծ է, ապա շի-  
ճուկի քանակությունը 1-1 $\frac{1}{2}$  կամ 2 անգամ ավելաց-  
վում է:

Ուժասպառ, ուրիշ ինֆեկցիաներ անցկացրած յե-  
րեխաների համար հանձնարարվում է՝ զոզան 3 կամ  
4 անգամ ավելացնել:

Այդպիսով ուրեմն սերոպրոֆիլակտիկայի կառա-  
րյալ հաջողությունը կախված է շիճուկի ակտիվու-  
թյունից, գործադրման ժամից և զոզայից:

Յերբ այդ պայմանները չեն պահպանվում, ստաց-

վում է յերկրորդ կարգի հետևանք: Լիակատար կան-  
խարգելում չի լինում, տեղի յե ունենում թույլ հի-  
վանդացում, ուշացած պրոգրոմ, կարճատև տաքու-  
թյուն, թեթև ընթացք:

Ինչ վերաբերում է 4-րդ խմբին, յերբ բարդու-  
թյուններ են ստացվում, ապա դրանք հետևանք են  
վատ տեխնիկայի կամ շիճուկի հատկություն-  
ներով են պայմանավորված լինում:

Շիճուկի վորակը գնահատելիս անհրաժեշտ է, վոր  
դոնորից վոչ մի ինֆեկցիա ներարկվողին չանցնի:  
Ուտտի արյունը պետք է հավաքել այն ապաքինվող-  
ներից (բեկոնվալեսցիտներից), վորոնք բարդու-  
թյուններ չունեն, ազատ են սիֆիլիսից և տուբեր-  
կուլյոզից:

Հարց է առաջանում, թե վորքան կատարչալ է մի  
մեթոդ, վորը տալիս է կարճատև իմունիտետ, վորը  
լավագույն դեպքում տեվում է 9 ամիս:

Ճիշտ է, նա հանգցնում է հրդեհը, սակայն կայուն  
իմունիտետ չի տալիս:

Դեբրեն հարց է տալիս, թե արդյոք ավելի լավ  
չէ, վոր այն յերեխան, վորին կարմրուկի վտանգ է  
սպառնում հիվանդանա թեթև կարմրուկով, վորպեսզի  
այդպիսով նա ինքն իր մեջ իմունիտետ մշակի, վոր  
նրան ապահովի ամբողջ կյանքում:

Վերոհիշյալից պարզ է, թե ինչպես կարելի չէ այդ  
նպատակին հասնել. կամ պետք է ներարկել վոչ լը-  
բիվ զոզա՝ մինչև 6-րդ որը, կամ պետք է ներարկում  
կատարել 7-րդ կամ 8-րդ որը:

## ՍԵՐՈՊՐՈՑԻՆԱԿՏԻԿՍՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԸ

Վորովհետև Դեզկվիդի մեթոդը տալիս է մի իմու-  
նիտետ, վորն արագ է և մնում է շարաթներ ու ա-  
միսներ, ուստի նպատակահարմար է այդ մեթոդը  
կիրառել, յերբ հարկավոր է, վորպեսզի սպառնալիքի  
տակ գտնվող չերելիան չհիվանդանա:

Իսկ յեթե մենք կամենում ենք պաշտպանել յերե-  
խային հետագա հիվանդացումից, նույն մեթոդը մենք  
կարող ենք կիրառել այնպիսի դոզաներով և այնպի-  
սի ժամկետով, վոր ստացվի արդրտիվ ձև, վորպեսզի  
ինքը հիվանդը մշակի ակտիվ իմունիտետ:

1924 թվին բակտերիոլոգներին, եպիդեմիալոգներին,  
սանթիշիկներին համառուսական համազումարն ար-  
տահայտվել է սերուպրոֆիլակտիկայի մասին հետևյալ  
ձևով. «Դա հուսալի պրոֆիլակտիկ միջոց է. նրա կի-  
րառումն ունի առանձին նշանակություն».

1) Տուբերկուլոզ և ըախտ հիվանդություններ  
ունեցողներին համար.

2) Հիվանդանոցում գտնվող չերելիաների համար.

3) Մինչև 3 տարեկան հասակ ունեցող մանուկնե-  
րի համար, վորոնք տալիս են մահացության բարձ-  
րագույն տոկոս, այդ է պատճառը, վոր Սպենսերը  
այդ խումբն անվանում է վտանգավոր խումբ:

Համազումարը հանձնարարել է մանկական հիմ-  
նարկներում իմունիտետ առաջացնել հիվանդացման  
արդրտիվ ձևերով, իսկ հիվանդանոցներում, ուր առ-  
կա են ներքին վարակներ, պետք է մեծ դոզայով  
ներարկել՝ վարակն ընդհատելու համար:

Այսպես ուրեմն հանձնարարվում է այս կամ այն  
մեթոդն ընտրելիս, — հիվանդացումը կանխելու կամ  
արդրտիվ ձև տալու նպատակով, միշտ անհատական  
մտտեցում ունենալ:

Կարմրուկի սերուպրոֆիլակտիկան հավանություն է  
ստացել դանազան համազումարներին, բազմաթիվ հե-  
ղինակների կողմից: Այդ միջոցը վորոշ մտքով դար-  
ձել է ժողովրդական միջոց:

Մինչև 30 թիվը արդեն 15,000 յերելիաներ ստա-  
ցել են այդ շիճուկը:

Սակայն դա ունի մի թերություն և դա այն է,  
վոր մասսայական դառնալու համար մեծ քանակու-  
թյամբ արյուն է պահանջվում:

## ՇԻՃՈՒԿԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ

Դեռևս Նիկոլն իր առաջին ղեկուցման մեջ, ապա  
Դեզկվիդին ավելի սուր կերպով հարց են հարուցել  
այն մասին, թե խոշոր կենտրոններում անհրաժեշտ է,  
ըստ կարելույն, ամենուրեք կազմակերպել արյան հա-  
վաքի և շիճուկի պատրաստման ու պահպանման կա-  
յաններ:

Առաջին անգամ այդպիսի կայան բացվել է 1921  
թվին Մյունխենում ենտուղիաստ Դեզկվիդի ջանքերով,  
ապա՝ Փարիզում և այնուհետև Գերմանիայի, Ռու-  
սիայի, Ամերիկայի բազմաթիվ քաղաքներում:

Այդ կայաններում հավաքում են վոչ միայն ա-  
պաքինվողներին (ոեկոնվալե ցենտներին), այլև հասա-  
կավորների, դոնորների, հիվանդների ծնողների ա-  
րյունը: Գերմանիայում դոնորները վարձատրվում են:

Այդպիսի կայաններ պետք է կազմակերպել բոլոր

վարակիչ և վոչ վարակիչ մանկական հիվանդանոցներում, բակտերիոլոգիկ ինստիտուտներին կից:

Մոսկվայում և Լենինգրադում չուրաքանչյուր մայր, վորն իր չերեխան տեղավորում է հիվանդանոցում, նախորոք իր արյունն է տալիս:

Ամենից նպատակահարմարն է մեծահասակ յերեխաների արյունը կամ կարմրուկից նոր ապաքինվող հասակավոր մարդկանց արյունը:

Մի հասակավոր հիվանդ կարող է տալ 30 անգամ ավելի արյուն, քան փոքրահասակը:

Փարիզի Կլոդ Բերնարի անվան մանկական հիվանդանոցի որինակը ցույց է տալիս, վոր արյան այլպիսի հավաքումը պետական գործ է հանդիսանում:

1925 թվի առաջին կիսամյակում նա 150 հասակավոր հիվանդից հավաքել է 10 լիտր շիճուկ, մի տարում՝ 8640  $\text{cm}^3$  շիճուկ, վորով ազատել է կարմրուկից 507 յերեխայի: Այնուհետև մի տարում հավաքել է 4357  $\text{cm}^3$  շիճուկ ապաքինվողներից (ռեկոնվալեսցենտներից), վորով իմունացման են յենթարկել 812 յերեխայի:

Ըստ Դեկգոլիցի՝ յեթե արյան հավաքատեղիները պլանային կարգով կազմակերպեն, ապա կարելի յե ունենալ արյան շտեմարան, վորտեղից միշտ կարելի յե բաժին հանել ում, յերբ, ինչքան հարկն է:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կարմրուկի նշանակութունը . . . . .	3
Կարմրուկը և հասակը . . . . .	5
Անցկացրած կամ ուղեկից հիվանդութունների ազդեցութունը . . . . .	8
Կլիման և կարմրուկը . . . . .	9
Սոցիալ—հիգիենիկ պայմանները և կարմրուկը . . . . .	9
Նյութական պայմաններն ու կարմրուկը . . . . .	11
Ախտընկալութունը կարմրուկի նկատմամբ . . . . .	13
Վարակվելու ձևը . . . . .	14
Կարմրուկի կլինիկան . . . . .	15
Կարմրուկի ընթացքը . . . . .	19
Տաքութունը . . . . .	21
Ընդհանուր վիճակը . . . . .	22
Պաթոգենեզը . . . . .	23
Իմունիտետ հանդեպ կարմրուկի . . . . .	25
Անոմալ կարմրուկ . . . . .	27
Բարդություններ . . . . .	28
Լարինգիտ . . . . .	30
Բրոնխիտ . . . . .	31
Թոքերի բորբոքում . . . . .	32

Ականջի բորբոքում . . . . .	34
Արյունահոսում . . . . .	34
Բերանահարինք և նոմա . . . . .	35
Լուծ . . . . .	36
Ուղեղի բորբոքում (ենցեֆալիտ) . . . . .	36
Կարմրուկի վաղաժամ դիագնոստիկայի նշանակութունը . . . . .	38
Պրոգնոզը . . . . .	40
Թերապիա . . . . .	40
Պայքար կարմրուկի դեմ . . . . .	41
Կարմրուկի տարածմանը խանգարող միջոցներ . . . . .	42
Հիվանդության կանխարգելումը . . . . .	44
Կարմրուկի շիճուկային պրոֆիլակտիկան . . . . .	45
Սերոպրոֆիլակտիկայի կիրառման ցուցմունքները . . . . .	50
Շիճուկի հավաքումը . . . . .	51

Պատ. խմբագիր՝ բժ. Ա. Ղազարյան  
 Տեխնիկական խմբագիր՝ Հ. Կառապետյան  
 Սրբագրիչ՝ Ս. Շահբալյան

30

ՀՀ Ազգային գրադարան



NL0937889



Սրոփ. ԴԱԵՐԻԵԼՅԱՆ

Կ Օ Ր Կ

Դնձ ՏՏՐԱ, Երեւան, 1967 ց.